

նա մէկն է միայն այն փաստերից, որոնցով դործում է լեզուի պատմիչը:

Ման. Թարգմանութեանս առաջին մասում մուտքուած է յիշեւ, որ ծանօթութեանց մի մասը, որ վերաբերում է զանազան հեռաւոր լեզուների, քաղուած է Ֆ. Ն. Ֆինկի, ներկայ յօդուածի սկզբում յիշատակուած աշխատութիւնից, աւանց քննադատելու հանգուցեալ հեղինակի կարծիքները:

Ա. Մէյլէ.

Պարիս, Կոլէժ դը Ֆրանս.

Թարգմ. ֆր. Մ. վարդ. Մախուղեանց

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Գարեղին վ. Յովսէփեան. Քարեկ հայ հնագրութեան, արտատպութիւն «Շոգակաթ» գիտական ժողովածուից. Վաղարշապատ, 4915, դին 4 ո.

Հայ բանասիրութիւնն անձկութեամբ սպասում էր մի այնպիսի գիտական լուրջ գործի, որպիսին է հ. Գարեղին վարդապետի ներկայ աշխատութիւնը: Գործը աւելի է պարունակում քան ինչ որ վերնագիրն է խոստանում: Հայր սուրբը 95 ընդարձակ տախտակներով տալիս է 150 նմոյշ հայ հնագրութիւնից սկսած է. դարի սկիզբներից մինչև ժ.Ը. դար, քաղելով ոչ միայն ձեռագրերից ու արձանագրութիւններից, այլ և ձեռագրերի կողքերից, մասունքների պահպանակներից ու սրանց նման այլ աղբիւրներից, որոնց վրայ ցարդ արժանի ուշադրութիւնը չէր դարձուած, թէև անհրաժեշտութիւնը միշտ էլ շեշտուել է: Հ. Գարեղինն հասել է իր առաջադրած նպատակին, այն է՝ զաղափար տալ հայ գրչութեան աստիճանական զարգացման մասին, որը ըմբռնելի դարձնելու նպատակով իւրաքանչիւր նմոյշի համար տուել է հակիրճ բայց լրիւ բացադրութիւններ գործի առաջին մասում: Պատմական դէպքերի հումեմատութեամբ և գիտութեան ընծայած փաստերի հիման վրայ շատ տեղ, ուր լուսանկարուած յիշատակաբանում թուական չկայ, հեղինակն հաւանական ենթադրութիւններով որոշել է ժամանակը:

Ի հարկէ, եթէ ծանօթ չլինէին մեզ այն բազմաթիւ դժուարութիւնները, որոնք անբաժան են այսօրինակ հրատարակութիւն-

ներկից, պիտի ցանկանայինք, որ նմուշները լինէին զեռ աւելի շատ, որովհետեւ բանասիրութեան համար ոչ մի կարիք այնպէս զգալի չէ, ինչպէս զանազան արձանագրութեանց լուսանկար ժողովածուների կարիքը, ուր փաստը ինքն է խօսում: Ներկայ ժողովածուից նոյնքան օգտուելու է հայ անցեալի ու լեզուի պատմութեամբ զբաղուողը որքան և հայ հնագրութիւնն ուսումնասիրողը:

2. Գարեգիներն իր գործի առաջին մասում տուել է լուսանկարուած արձանագրութեանց ընթերցումները, որոնք ընդհանրապէս յաջող են: Մենք ընդամենը սկզբի 20-ի չափ ընթերցուածները միայն համեմատեցինք իսկականների հետ համապատասխան տախտակներում և, կարծում ենք, վիճելի կէտեր մնացել են. այսպէս էջ՝ 6, ցածրից տող՝ 6, Հռիփսիմի պէտք է ուղղել Հռիփսիմի, էջ՝ 7, ցածրից տող՝ 18, ամուսնոյ պէտք է կարդալ ամուսնոյ (սմ միացրած և լ), էջ՝ 8 ցածրից տող՝ 5, զոհանամ ա՛յ, ուղղելի՛ գոհանամ գա՛յ (արձանագրութեան մէջ 2 թէև աղարտուած, բայց այնուամենայնիւ նկատելի), էջ՝ 12-ում մէջ բերուած արձանագրութիւնը «Այս է հանգիստ . . . Դէ Սահակ իրիցորդոյ թվական Դ՞՞» մամանակի աշխարհաբարով է գրուած և, ինչպէս իրաւամբ նկատում է գործիս հ. հեղինակը, օրինակ է «անվարժ արձանագրական գրչութեան»: Ա՛րդ, զարմանալի չէ, եթէ մի անվարժ կամ, ուրիշ բառով, տգէտ անձնաւորութիւն Ե. դարու ՏԵՐ ԲՈՒՐ իր ժամանակի արտասանութեան համաձայն և առանց պատուի ուղղագրէր ՎԵՐ, և արձանագրութեան մէջ այդպէս էլ տեսնում ենք: Իսկ ԴԵ ոչ մի իմաստ չունի:

էջ՝ 7, վերից տող՝ 6, ՀԱ լուսանկարուած արձանագրութեան մէջ աչքի չի ընկնում. աւելի հաւանական է որ վերջին տառը լինի Ս իբրև նախորդ բառի յօղը—«ի բուականութեան», իսկ թուականի տառերը ջնջուած լինին կամ բացակայեն:

Ներկայ արձանագրութեանց մէջ լեզուի ուսումնասիրութեան համար, ինչպէս ասացինք, նիւթ շատ կայ: Ուշագրաւ է ՏԵՐ և ՏԵՍՈՒՆ ԲԱՌԵՐԻ ամբողջական ուղղագրութիւնը, երբ խօսքը Արշարունեաց տիրոջ մասին է, որ հասարակ մահկանացու է և զեռ կենդանի, մինչ երբ Աստուած է տէր անուանուում կամ նոյն Արշարունեաց տէրը մահուանից յետոյ, միևնոյն բառը գրւում է պատիւով (՝). հմ. էջ՝ 7, ՏԵՐ, էջ՝ 8, ՏԵՍՈՒՆ, և էջ՝ 8 Տ՞Ն (յամի Տ՞Ն), էջ՝ 10 «ԵՐՈՒՆԵՒԻ (=հանգուցեալ) Տ՞Ր ԱՐՏԱՆԱԳՊ», ին. «ԱՐՏԱՐՈՒՆԵԱՅ Տ՞ՆԵՆ (հանգուցեալ)»: 12-րդ արձանագրութիւնից, էջ՝ 11, որի թուականն է ՅԺԶ=867, երևում է, որ Թ. դարում արգէն անցեալ դերբայի -եալ վերջաւորութիւնը վերածուած էր -ել-ի (լել փխ. լեալ, նգ(ով)ել փոխ. նգովեալ) մի շարք ուրիշ

ձայնարանական փոփոխութեանց հետ, որոնք սոյն արձանագրութեան մէջ հանդէս են գալիս:

95 տախտակներից վերջին 5-ը, որոնք «Շողակաթ»ի մէջ բացակայում են, պարունակում է հրեք էջ համառոտագրական նշաններ, որոնք նոյնպէս արժանի են ուսումնասիրութեան և իրօք կապում են գրչութեան արուեստի հետ: Կան այնպիսի նշաններ, որոնք վերցրած են առարկայի ձևից, օր. գաւազան, որի համառոտագրութիւնը կրում է T ձևը, կամ լուսին, որի նշանակը նոյն ձևով մինչև այսօր էլ գործածական է օրացոյցի մէջ: Նշաններից ոմանց մէջ երևում են ամբողջական գրութեան սղման հետքերը, օր. խորհուրդ, որի նշանակը կազմուած է խղ ստոհերի հիւսուածքից: Սակայն կան և այնպիսիները, որոնք, կարծում ենք, առ այժմ անլուծելի են, օր. խոնարհ, որ արտայտուած է երկու գրօ-ով (0—0) մէջտեղից միացած մի հորիզոնական գծով: Արդեօք չկան սրանց մէջ փոխառութիւններ օտար լեզուներից. փիլիսոփայ բառի նշանակը թւում է մեզ փոխառութիւն արաբական գրութիւնից, ուր միևնոյն ձևով է վերջանում սէնե (տարի) բառի վերջին հ տառը արձանագրութեանց մէջ: Եւ կամ սոյն նշանների մէջ չկան այնպիսիները, որոնք վերջին հետքերը լինին պատկերագրական մի դրութեան, որ գուցէ հրք և իցէ գոյութիւն ունեցած լինի մեր մէջ:

Այսքան օգտակար մի աշխատութեան առթիւ մտում է սըրտանց ցանկանալ յաջողութիւն մեր յարգելի միաբանակցին, որ իր ուսումնասիրութեանց շարքը նմանօրինակ նոր գործերով ճոխանայ:

Մեսրոպ վարդ. Մախուդեանց.

